

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՐԱՔՍԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ АРАКС

N 98

ՀՀ Արմավիրի մարզ, Արաքսի գյուղական համայնք,

Հասցե՝ Դրոյի 2, հեռ.՝ (098)74-75-49, էլ. փոստ՝ araqsvagharshapat.armavir@mta.gov.am

«17» հուլիսի 2015թ.

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ
պարոն Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Կից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի գյուղական համայնքի ղեկավարի 2015 թվականի հուլիսի 17-ին կայացած ժողովի հաշվետվությունը 2015 թվականի կիսամյակային ծավալված գործունեության վերաբերյալ:

Արաքս համայնքի

ղեկավար՝



/ Ա. Միքաելյան

ՀԱՆՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Արարս /Էջմ./ համայնքի ղեկավարի 2015թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ

Հարգելի համայնքի բնակիչներ և պարոն Ա. Այվազյան, թույլ տվե՛ք Ձեր ուշադրությանը ներկայացնել Արարս համայնքի ղեկավարի, ավագանու և գյուղապետարանի աշխատակազմի 2015թ. հունվարի 1-ից մինչև հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքների և միջոցառումների ամփոփիչ տեղեկատվությունը:

Արարսի գյուղապետարանը իր գործունեությունը իրականացնում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համաձայն: Մեր համայնքը ունի 530 տնտեսություն, բնակչությունը՝ 2052 մարդ, մոտ 1302 ընտրող, 1290հա հողատարածություն, որից ոռոգվող 682հա հողատարածք: 2014 թվականին մշակվել է շուրջ 207.6 հա հողատարածք, անցյալ տարվա համեմատությամբ 5 հա ավել: Գյուղում մշակվում են գյուղատնտեսական տարբեր կուլտուրաներ:

Ըստ բնագավառների կատարվել են

Ֆինանսական բնագավառում

Կազմակերպվել է և շարունակվում է հողի հարկի և գույքահարկի հավաքագրման աշխատանքները: Նախատեսված 7464.0 հազար դրամի փոխարեն հավաքագրվել է 2385.4 հազար դրամ սեփական եկամուտ, այսինքն ապահովել ենք եկամուտների հավաքագրման 31.9 տոկոս կատարողական:

Գյուղապետարանը աշխատավարձի և նկամտային հարկի պարտքեր չունի:

Համայնքի հաշվեհամարին կուտակվել է 3007.8հազար դրամ գումար, որը նախատեսված է ծախսել համայնքի հիմնախնդիրների լուծման վրա:

Կրթության, մշակույթի և նրիտասարդության հետ տարված աշխատանքների բնագավառում

Համայնքում գործում են պարի խմբակ, խմբակում կան 17 աշակերտներ:

Գործում է նաև Քինգ-բորսինգի խմբակ, որին մասնակցում են թվով 43 աշակերտներ: Խմբակի աշակերտները մասնակցում են տարբեր հանրապետական մրցումներին:

Պաշտպանության բնագավառում

Կազմակերպվել է զինապարտների հաշվառման, նրանց բուժզննման աշխատանքները: Ուժնդացվել է կապը զինկոմի հետ և կազմակերպվել է գորահավարի աշխատանքներ: Հաճախակի կազմակերպվում են հանդիպումներ համայնքի բնակիչների և սահմանապահ ուղեկալների հրամանատարության միջև:

Մոցիալական ծառայության բնագավառում

Աջակցություն է ցուցաբերվել անապահով ընտանիքներին: Թվով 12 անապահով ընտանիքների տրվել են դրամական օգնություն ընդամենը՝ 1630.0 հազար ՀՀ դրամի:

2015թվականին համայնքի թվով 12 մահացածների համար գնվել է ծաղկնապսակներ՝ ընդամենը 181.5 հազար ՀՀ դրամի:

Հայոց բանակի օրվա՝ հունվարի 28-ի, հայրենիքի պաշտպանի օրվա՝ փետրվարի 23-ի և կանանց միջազգային օրվա մարտի 8-ի կապակցությամբ կազմակերպվել է միջոցառումներ և գնվել է նվերներ, ընդհանուր գումարով՝ 692000 ՀՀ դրամի:

Գյուղատնտեսության բնագավառում

Կազմակերպվել են գարնանացանի, պարարտագման և ոռոգման աշխատանքներ և պետության կողմից տրված պարատանյութը բաշխվել է համայնքի բնակիչներին:

Շրջակա միջավայրի պաշտպանություն

Համայնքի բյուջեի հաշվին կատարվել է աղբահանություն՝ շուրջ 120.0հա բնակավայրի տարածքից, որի համար համայնքի բյուջեից ծախսվել է 602.0հազար դրամ գումար:

Համայնքի հիմնախնդիրներ

Համայնքի հիմնախնդիրները այսօր էլ մնում են՝

1. Համայնքի գազաֆիկացումը,
2. Ոռոգման ջրի անբավարարությունը,
3. Մանկապարտեզի շենքի հիմնանորոգումը,
4. Դպրոցի և մշակույթի տան վերանորոգումը:

Արարս համայնքի ղեկավար՝



Ա. Միրանյան